ՍԻՐԱՋ-ՈՒԴ-ԴՈՈՒԼԵԻ ԳԼԽԱՎՈՐԱՑ ՀԱԿԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԲԵՆԳԱԼԻԱՅՈՒՄ (1756—1757 ԹԹ.) ԸՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ

ՌԱՖԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Անգլիական բուրժուական պատմաբանները Հնդկաստանի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում Անգլիայի գաղութային նվաճումները ներկայացնում են որպես առևտրական նպատակով խաղաղ թափանցումներ, իսկ հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական ելույթները՝ խռովություններ։ Անգլիական իմպերիալիզմի նախկին պարագլուխ Ու. Չերչիլը գրել է, որ իբր բրիտանական կայսրությունն իր իշխանությունը Հնդկաստանի վրա գրեթե պատահական է հաստատել։ «Անգլիացիների միակ նպատակը,— գրել է Ու. Չերչիլը,— կարգ ու կանոն, խաղաղություն հաստատելն է եղել Ասիայի բարբարոս այս մասում»[1]։ Անգլիական պատմագիտության այս և նման այլ խեղաթյուրումները մերկացնելու համար անգնահատելի արժեք ունեն հայկական այն սկզբնաղբյուրները, որոնք գրվել են Հնդկաստանում կատարված դեպքերին ականատես, հաճախ նաև մասնակից հայերի կողմից, որոնք հիմնականում անաչառ են և շահագրգռվածություն չեն ունեցել խեղաթյուրելու պատմական փաստերը։ Հնդկաստանի պատմության, հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջին փուլի ուսումնասիրության համար արտակարգ մեծ արժեք ունի Թովմաս Խոջամալյանի «Պատմութիւն Հնդկաց» աշխատությունը, որի հիմքում ընկած են ոչ միայն դեպքերին ականատես մարդու գրառումները, այլ նաև շահ Ալիմ II-ի (1759—1806) արքայական դիվանատան վավերագրերը։

Թ. Խոջամալյանը ծնվել է մոտավորապես XVIII դ. 20-ական թվականներին, մահացել 1790 թ. և թաղվել Ագրայի հայոց գերեզմանատանը[2]։ Մասնագիտությամբ նավավար է եղել, հավանաբար զբաղվել է նաև վաճառականությամբ։ Նրա մեծ համարձակության և հեղինակության մասին է խոսում այն փաստը, որ նա Լոնդոնում դատ է բացել Արևելահնդկական ընկերության ղեկավար Վանսիտարտի դեմ և ստիպել նրան ետ վերադարձնել հայերից անիրավացի խլած 500.000 դահեկանը[3]։ Թ. Խոջամալյանի աշխատության ձեռագրից 1823 թ. Գ. Տեր-Անդրիասյանի կատարած ընդօրինակությունը տպագրող Մ. Թաղիադյանը «Պատմութիւն Հնդկացի» հեղինակին համարում է «Նոր Մարաբաս Կատինա տեղեակ բուն պարսիկ, հնդիկ և անգղիական բարբառոյ... արծարծելով Գոգչիր և զաղգասեր եռանդն անմահացեալ Նախահօր մերոյ պատմութեան՝ զՄովսեսի Խորենացւոյ հաւաքեաց աստի և անտի նիւթս և եթող մեզ զանբաւութիւն ծանօթութեանց գաղտնեաց աշխարհին»[4]։

Թ. Խոջամալյանն իր աշխատությունը շարադրել է 1768 թ.։ Այդ աշխատության մասին նա թողել է հետևյալ հիշատակարանը. «Թիւն 1768, Դամայ 15-ի թագավորանիստ քաղաքն Էլրազ ի ժամանակին Շահ Ալէմին, որ էր թագաւորիս մեծ դիւանն խասլու էր անդ որոյ անունն էր Ռաջա Սէիդ-Բաֆ,

---

[1] J. Churchill, History of the English speaking peoples. London, 1957, vol. III, p. 291.

[2] Դ. Ե. Փոլադյան, Ագրայի հայ գաղութը, Բեյրութ, 1968, էջ 82։

[3] «Թովմաս Խոջամալեան Նոր Ջուղայեցւոյ Պատմութիւն Հնդկաց», մասն երկրորդ, 1849, ի Կալկաթա, էջ Դ—Ե։

[4] Նույն տեղում, էջ Ե։

և միւսոյն Ռաջա Դրիրան որք էին ինձ բարեկամաք։ Մեծաւ աղաչանօք և փափագանօք ի սոցանէ ընկալայ. ի միջի 12 աւուրց թարգմանեցի մի ըստ միոջէ ի փարսիացւոյ գրանցէ արքունուսի ի բարբառ մէր, որ եղև աւարտ Դամայ 26 ումն»[5]։ «Բացի սրանից,— ավելացրել է Լեոն,— Խոջամալյանը նյութեր հավաքեց և նոր ժամանակների մասին, անձամբ շրջելով, հարցուփորձ անելով ականատեսներին և ականջալուրներին։ Այդ նյութերի վրա հիմնված նա գրեց Հնդկաստանի այդ շրջանի պատմությունը մինչև իր օրերը, համառոտ, բայց փաստալից մի պատմություն»[6]։ Բազմաթիվ փաստերով Թ. Խոջամալյանը մանրամասն նկարագրել է հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջին փուլը Բենգալիայում 1756—1763 թթ., նավաբներ Սիրաջ-ուդ-Դոուլեի և Միր Քասիմ-խանի ղեկավարությամբ։ Այդ փաստերի մի մասը, որը վերաբերում է Սիրաջ-ուդ-Դոուլեի գլխավորած հակագաղութային պայքարին, ընկել է մեր հոդվածի հիմքում։

XVIII դ. 40—50-ական թվականներին անգլիական աղդեցությունը գնալով աճում էր Հնդկաստանի ամենից հարուստ մարզերից .Բենգալիայի, դրա հարևան Աուդի ու Բիհարի տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում։ Անգլիացիները զարտուղի ճանապարհով կամ բացահայտ սկսել էին միջամտել Բենգալիայի, Բիհարի և Օրիսսայի նավաբ Ալլահվարդի խանի ներքին գործերին։ Վերջինիս տիրույթներում անգլիական ֆակտորիաների թիվն անցնում էր հարյուրից։ Կա այն սխալ կարծիքը, որ նավաբ Ալլահվարդին վախենալով, որ կարող է բաժանել նախորդ կառավարող Մուզաֆար Ջանգի և մյուսների ճակատագիրը, որոնց սպանությունը կազմակերպել էին անգլիացիները, նրանց նկատմամբ վարում էր մեղմ քաղաքականություն և «չէր ուզում անգլիական վաճառականներին դուրս վռնդել իր տիրույթներից. նա ուզում էր միայն սահմանափակել նրանց առևտրական գործողությունները»[7]։ Հնդիկ գիտնականների կարծիքով նա աշխատում էր անգլիացիների առևտուրը դնել այնպիսի վիճակի մեջ, ինչպիսի պայմաններից օգտվում էին հայերը[8]։

Պատմական բազմաթիվ անառարկելի փաստերը սակայն վկայում են, որ Ալլահվարդի խանը վարել է շեշտված հակաանգլիական քաղաքականություն։ Աղբյուրները միաժամանակ հավաստում են, որ նավաբի այդ քաղաքականությանը տոն տվողների մեջ են եղել նաև նրա հայազգի մտերիմներ խոջա Պետրոս Տեր-Նիկողոսյան Ջուղայեցին, որը «Վասն իւրոյ հաւատարմութեան, խոհեմութեան և ճշմարտութեան սիրելի էր լեայ աչս Ալլահվարդի-խանին»[9], խոջա Պետրոս Հարությունյանը[10], խոջա Վազիրը[11] և այլք։

Թ. Խոջամալյանը Մուրշիդ-Ղուլի խանին բնութագրում է որպես գործունյա և քաջ գործչի, գովում է նրա ձգտումը՝ Բենգալիայի, Բիհարի և Օրիսսայի տարածքներից ստեղծելու միասնական, ամուր պետություն։ Նա հատկապես հաճույքով և շեշտված է խոսում նրա ինքնուրույն և հակաանգլիական համարձակ քաղաքականության մասին[12]։

---

5 Նույն տեղում, էջ Թ։

6 Լ ե ո, Երկերի ժողովածու, Երևան, հ. 3, 1973, էջ 548։

7 К. А. Антонова, Английское завоевание Индии в XVIII века, М., 1961, с. 84.

8 Н. К. Синха и А. Ч. Банерджи, История Индии, М., 1955, с. 305.

9 Թ. Խ ո ջ ա մ ա լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 47։

10 M. J. Seth, Armenians and East India Company. Calcutta, 1926, p 7—9.

11 N. K. Sinhā, The economic history of Bengal from Plessy to the permanent Setlement, Calcutta, 1949, vol. 2, p. 177.

12 Թ. Խ ո ջ ա մ ա լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 48։

1756 թ. Ալլահվարդի խանի մահից հետո Բենգալիայի դահը խլեց նավաբ Սիրաջ-ուդ-Դոուլեն՝ նրա քսանամյա թոռը[13]։ Սիրաջ-ուդ-Դոուլեի կառավարման ժամանակաշրջանի վերաբերյալ կան հարյուրավոր ուսումնասիրություններ[14], հրատարակված են բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնց բոլորի հրատարակիչներն ու հեղինակները մեծ մասամբ կա՛մ անգլիացիներ են, կամ էլ անգլիական ծառայության մեջ գտնված հնդիկներ։ Սակայն պատմական փաստերն այդ գրականության մեջ այնպես են խեղաթյուրված և աղավաղված, որ անգամ այսօր հնդիկ գիտնականներն ակամայից կրկնում են անգլիացիներին[15]։

Ինչպես երևում է «Պատմութիւն Հնդկացից», Սիրաջ-ուդ-Դոուլեն անցնելով իշխանության դուխ՝ իր կառավարման առաջին իսկ օրերից սկսել է վարել բացահայտ հակաանգլիական քաղաքականություն։ Հայտնի է, որ Բենգալիայի անդլոֆիլ տարրերի միջոցով (Դասիտի Բեգում, Կրիշնա Դաս, Ռաջբալլաբխ և ուրիշներ) նավաբի դեմ անգլիացիների կազմակերպած անհաջող մահափորձից հետո դավադիրների խումբը փախավ Կալկաթա[16]։ Նրանց միացավ նաև Դաքքայի դավաճան կառավարիչ Շաքուտ Ջանգը, որն իր հետ տարավ պետական գանձարանից հափշտակած 20 միլիոն ռուպի[17]։ Անգլիացիներն այս փախստականներին աշխատում են ներկայացնել որպես նավաբի գաղանությունների զոհերի։ Թ. Խոջամալլյանը ևս սխալմամբ այդ դավաճաններին ներկայացնում է որպես նավաբի անտեղի զայրույթից փախած և անգլիացիների մոտ ապաստան գտած անմեղ զոհերի։ Բոլորովին այլ կարծիքի է մեկ այլ հայ հեղինակ՝ Հ. Ագոնցը։ Նա գտնում է, որ փախստականները դավադիրներ և դավաճաններ էին[18]։

Սիրաջ-ուդ-Դոուլեն նախ աշխատել է բանակցությունների ճանապարհով հասնել այն բանին, որ դավաճանները վերադարձվեն։ Նա Կալկաթա է ուղարկել մի քանի բողոք-նամակներ, անգամ դեսպաններ։ Ինչպես վկայում են օտար աղբյուրները, անգլիացիների մոտ դեսպան է ուղարկվել նաև հայազգի խոջա Վազիդը[19]։ Ժամանակակիցները միաբերան հաստատում են, որ խոջա Վազիդը XVIII դ. Բենգալիայի ամենից աչքի ընկնող ֆինանսական ու քաղաքական դեմքերից էր։ Հնդիկ կոմունիստ պատմաբան Կաբիրաջ Նարահարին նրան դնում է Սվարաթ Ջանգի և Ջագաթ Սեթհ եղբայրների կողքին, որոնց անվան հետ է կապվում բուրժուական հարաբերությունների զարգացման սկզբնավորումը Բենգալիայում[20]։

Ոչ միայն հնդկական ու հայկական, այլև անգամ անգլիական աղբյուրները վկայում են, որ Սիրաջ-ուդ-Դոուլեն խոջա Վազիդին բանակցություններ վարելու նպատակով շորս անգամ ուղարկել է Ֆորտ-Վիլյամ[21]։ Նավաբի ուլտիմատում-պահանջներից մեկում ասվում էր, որ անգլիացիները պարտա-

---

[13] К. Антонова, նշվ. աշխ., էջ 83—84։

[14] V. Smit, The Oxford history of India, vol. II, Oxford, 1958; H. Dodwell The Cambridge history of India, vol. V, Cambrige, 1929; M. Ellipson, The History of India, vol. III, London, 1849 և այլն։

[15] R. K. Gypta, Siraguddaolah and East India Company 1756—1757 backraund from fondation Power in India, Calcutta, 1959, p. 48.

[16] Е. Я. Люстерник, Из истории захвата Бенгалии англичанами («Ученые записки Ленгосдединст-а им. Герцена», т. 62, Л., 1948).

[17] К. А. Антонова, նշվ. աշխ., էջ 48։

[18] Հ. Գ. Ագոնց, Աշխարհագրութիւն չորիցն մասաց աշխարհի, Ասիա, հ. Գ, Վենետիկ, 1806, էջ 63։

[19] Е. Я. Люстерник, նշվ. աշխ., էջ 172։

[20] Кабирадж Нарахари, Национально-освободительное движение в Бенгалии М., 1956, с., 28.

[21] Е. Я. Люстерник, նշվ. աշխ., էջ 173։

վոր են 15 օրվա ընթացքում հողին հավասարեցնել կառուցված ամրոցները, վերադարձնել դավաճաններին, ինչպես նաև դադարեցնել «դաստակներով» (առևտրի թույլտվության իրավունք) առևտրի[22] շարաշահումները։ Նավաբի մեջ հասած մի նամակում՝ ուղղված անգլիական ֆակտորիայի ղեկավարներին, որը տեղ էր հասցրել նրա հայ դեսպանը, կարդում ենք. «Ես լի եմ վճռականությամբ՝ սահմանափակելու անգլիացիների գործողությունները։ Եթե նրանք ուզում են մնալ իմ երկրում, պարտավոր են կատարելու իմ բոլոր պահանջները։ Հակառակ դեպքում ես նրանց դուրս կշպրտեմ իմ գավառներից»[23]։

Անգլիացիները ոչ միայն չկատարեցին նավաբի պահանջները, այլև նրան ուղարկեցին խիստ վիրավորական մի նամակ[24]։ Ջայրացած Սիրաջ-ուդ-Դոուլեն իր բանակը շարժեց անգլիացիների վրա՝ նպատակ ունենալով նրանց վռնդել երկրի սահմաններից։ Նրա այս քայլով փաստորեն սկսվում է հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջին փուլը։ Հնդկաստանի պատմության խոշոր մասնագետ Հ. Դոդվելլն անգլիական աղբյուրներից ելնելով հավաստում է, որ անգլիացիների վրա շարժվող բենգալական բանակի կազմում կային 150 հայ աշխարհազորայիններ[25]։ Հ. Դոդվելլի հաղորդած այս հետաքրքիր փաստը հաստատում են նաև Ռ. Օրմը[26] և հնդիկ գիտնական Բ. Գուպտան[27]։ Վերջինս հայ զինվորների թիվը ցույց է տալիս 240[28]։ Բ. Գուպտան Կալկաթայի միջնաբերդի վրա գրոհող հայ զինվորների թիվը հաշվում է 285 հոգի[29]։ Անգլիացիների դեմ պայքարի ելած հայ զինվորների վերաբերյալ հետազոտողների հաղորդած տարբեր թվերը չպետք է տարակուսանք առաջացնեն։ Հավանաբար, Հ. Դոդվելլի հաղորդած 150 աշխարհազորայիններին Կալկաթայի ճանապարհին շրջակա վայրերից, գուցե և հենց Կալկաթայում միացել են հայերի նոր խմբեր։ Կալկաթայի միջնաբերդի գրոհին մասնակցած հայերի վերաբերյալ Հ. Դոդվելլի և մյուսների հաղորդումը մեզ համար ունի կրկնակի արժեք, քանի որ նրանք ոչ թե վարձված զինվորներ էին, այլ աշխարհազորայիններ, հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարին կամավոր զինվորագրվածներ։ Բազմահազար հնդկական բանակի մեջ եղած հայ զինվորների թիվը չպետք է քիչ համարել, քանի որ Մուրշիդաբադում, Կալկաթայում և շրջակայքում ապրող հայերի թիվը շատ չէր։

Բուրժուական պատմաբանները, խեղաթյուրելով փաստերը, փորձում են ապացուցել, որ իբր նավաբ Սիրաջ-ուդ-Դոուլեի հակաբրիտանական այս ելույթը չուներ քաղաքական բնույթ։ Բ. Գուպտան գրում է. «Երիտասարդ նավաբն ուզում էր խլել օտարերկրյա վաճառականների հարստությունը, որը, լուրերի համաձայն, շատ ավելի էր, քան այն իրականում կար»[30]։ Ուրիշները նավաբի կողմից Կալկաթայի գրավումն ու անգլիական ֆակտորիաների ավերումը բացատրում են անգլիացիների նկատմամբ նրա ունեցած ատելությամբ միայն[31]։

---

22 Նույն տեղում, էջ 176։

23 Р. А. Абрамян. Об одном армянском источнике по истории Индии (*«Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, էջ 214*)։

24 Նույն տեղում, էջ 214—215։

25 H. Dodwell, Նշվ. աշխ., էջ 149։

26 [R. Orm], A history of the military transactions of the British nations of India, vol. II, London, 1875, p. 281.

27 B. K. Gupta, Նշվ. աշխ., էջ 49։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում, էջ 52։

30 Նույն տեղում, էջ 48։

31 Е. Я. Люстерник, Նշվ. աշխ., էջ 178։

Մեզ է հասել Սիրաջ-ուդ-Դոուլեի նամակն իր հայ բարեկամին՝ վերոհիշյալ խոջա Վազիդին, որտեղ նա բացատրում է իր հակաանգլիական ելույթի պատճառը։ Նա գրում է. «Կան երեք դրդապատճառներ, որոնք մեզ ստիպում են անգլիացիներին արմատախիլ անել մեր երկրից։

1. Նրանք կառուցել են ուժեղ ամրություններ և դրանց շուրջը փորել խոր ամբարտակներ, որն արգելվում է զոյություն ունեցող օրենքներով։ 2. Նրանք շարաշահում են «դաստակներով» տրվող արտոնությունները, «դաստակներ» են տալիս մարդկանց, որոնք դրա իրավունքը չունեն։ 3. Նրանք հովանավորում են կառավարության այն թշնամիներին, որոնց անհրաժեշտ էր ենթարկել պատժի։ Վերադարձնելու փոխարեն նրանք այդպիսի մարդկանց թույլ են տալիս թաքնվելու իրենց տիրույթներում»[32]։ Ինչպես տեսնում ենք, նավաբի հակաանգլիական ելույթն ուներ խոր քաղաքական պատճառներ։ Նա խորապես համոզված էր, որ անգլիացիներն իր երկրի կատաղի թշնամիներն են, դրա համար էլ ուզում էր նրանց վռնդել երկրից[33]։

Կալկաթայի վրա շարժվող բենգալական բանակն առանց դժվարության ջախջախեց անգլիական կայազորը և նրա մնացորդներին դուրս շպրտեց քաղաքից։ Կայազորի մնացորդները և տեղի անգլիական վաճառականները փախան ու հաստատվեցին Կալկաթայից ոչ հեռու գտնվող Ֆաթյա կղզում։ Կալկաթան գրոհով առնելու գործում հայկական զորաջոկատի խաղացած դերի մասին որևէ մանրամասնություն չգիտենք։ Սակայն հաստատ է, որ հայ կամավորներից բաղկացած զորաջոկատն ակտիվ մասնակցություն է ունեցել հնդիկ ժողովրդի 1767 թ. հակաանգլիական պայքարին, որի շնորհիվ, Կ. Մարքսի բնորոշմամբ, «Բենգալիան այժմ լիովին և բավականին հիմնովին մաքրվեց անգլիական անկոչ հյուրերից»[34]։

Անգլիական բուրժուական պատմաբանները խոսելով այս դեպքերի մասին, ինչպես հայտնի է, միաբերան առաջ են քաշում, Կ. Մարքսի բնորոշմամբ, «Պատմության մեջ մինչև այժմ եղած ամենից խոշոր ստերից մեկը՝» «Blac Holl»-ի առասպելը, «որի շուրջն այնքան աղմուկ են բարձրացնում անգլիական կեղծ բարեպաշտները»[35]։ Համաձայն այդ կեղծիքի, 1756 թ. հունիսի 20-ին Սիրաջ-ուդ-Դոուլեի հրամանով գերի ընկած 146 անգլիացիների բանտարկել են Կալկաթայի զորանոցի բանտախցերից մեկում (մոտ 20 մ² մեծությամբ)։ Օդի պակասի և շոգի պատճառով մի դիշերում նրանցից 123 հոգի մահացել են[36]։ Այս մասին առաջին անգամ հաղորդել է բանտարկվածների թվում եղող Արևելահնդկական ընկերության պատասխանատու ծառայող Ջ. Հոլուելը[37]։ Բենգալիայի այս շրջանի պատմությամբ զբաղվող գրեթե բոլոր հետազոտողները, հատկապես անգլիական բուրժուական պատմագիտության ներկայացուցիչները՝ Թ. Վեքլերը[38], Ռ. Ֆրազերը[39], Հ. Դոդվելը[40] և շատ ուրիշներ հիմք ընդունելով Ջ. Հոլուելի հաղորդումը՝ խտացված գույներով են ներկայացրել այս դեպքը։

Թ. Խոջամալյանը «Պատմութիւն Հնդկացում» նույնպես անդրադարձել է այդ իրադարձությանը։ Նա այդ մասին գրում է. «Եւ բազումս ի զօրաց քրիստոնէից որք ոչ կարացին փախչել ըմբռնեալ եղ ի փոքրիկ բանտի մեջ, որ ոչ

---

32 Նույն տեղում։

33 T. Khogamall, Hindostan, Allahabad, 1764, p. 70.

34 К. Маркс, Хронологические выписки по истории Индии..., М., 1947, с. 63.

35 Նույն տեղում։

36 V. Smit, Նշվ. աշխ., հ. II, էջ 241։

37 К. А. Антонова, Նշվ. աշխ., էջ 85։

38 Talbus Whecler, A history of India, London, 1888, p. 271.

39 B. W. Frazer, British India, London, 1971, p. 92—93.

40 H. H. Dodwell, The Cambridge history of India, vol. V, London, 1929, p. 117.

լինելով բաւական տեղի յորոց մեռան աւելի քան տասն և հինգ զինուորք ի միում դիշերեն»[41]։ Հայտնի է, որ Թ. Խոջամալյանն այդ ժամանակ գտնվում էր Բենգալիայում, գուցե և հենց Կալկաթայում, հետևաբար դեպքերին ականատես էր։ Ինչպես տեսնում ենք, դեպքերին ականատես երկրորդ անձնավորությունը, որն արդեն շահագրգռված չէր փաստերի աղավաղմամբ և կեղծիքով, հաղորդում է այլ բան։ Նա, չհերքելով այն փաստը, որ գերված անգլիացիները, իրոք, բանտարկվել են փոքրիկ բանտախցում, զոհվածների թիվը ցույց է տալիս ոչ թե 123, այլ՝ 15։ Այսինքն, հայկական սկզբնաղբյուրը հաստատում է այն գիտնականների ենթադրությունը, որ Ջ. Հոլուելլը բացահայտորեն չափազանցրել է «Blac Holl»-ի բանտի վերաբերյալ բերած փաստերը։ Ի դեպ, իր մեկ այլ աշխատության մեջ Թ. Խոջամալյանը[42] մահացած անգլիացիների թիվը ցույց է տալիս 14։ Ջ. Հոլուելլի կեղծիքը հերքում է մեկ այլ հայկական սկզբնաղբյուր ևս։ Հնդկահայ նշանավոր վաճառական է. Էմինը որդուն՝ Հովսեփին, Լոնդոն ուղարկած նամակում գրում է. «Անհավատ Սիրաջ-ուդ-Դոուլեն եկավ Կալկաթա, քաղաքում կարգը խանգարվեց, միայն ես կորցրեցի 16.000 ռուպի։ «Blac Holl»-ում նա ոչնչացրեց 40 անգլիացի»[43]։ Այս վաճառականը, որն իր առևտրատնտեսական շահերով կապված էր Արևելահնդկական ընկերության հետ և Սիրաջ-ուդ-Դոուելի՝ Կալկաթան գրավելու պատճառով կորցրել էր զգալի գումար, բնականաբար, այդ մասին խոսելիս չէր կարող չչափազանցնել սպանվածների թիվը։ Սակայն անգամ այդ դեպքում այն շատ հեռու է Ջ. Հոլուելլի կեղծած թվից։

«Պատմութիւն Հնդկացում» պահպանվել են բազմաթիվ փաստեր, որոնք անառարկելիորեն հերքում են անգլիացի հեղինակների հաղորդումը՝ նավաբի և հնդիկների «գազանությունների» մասին։ Կալկաթայից Մուրշիդաբադ վերադառնալիս նավաբը, Թ. Խոջամալյանի վկայությամբ, իր հետ տարավ Կալկաթայում մնացած անգլիացի ծառայողների կանանց, որոնք թողնվել էին բախտի քմահաճույքին, այդ թվում նաև Ջ. Հոլուելլի կնոջը՝ Բ. Ջոնսոնին։ Նավաբը նրանց Մուրշիդաբադում բաց է թողել՝ առանց որևէ մեկին անգամ վիրավորանք հասցնելու, իսկ հետագայում նույնիսկ օգնել՝ ապահով Կալկաթա վերադառնալու։

Մինչև վերջերս միայն ենթադրություններ կային այն մասին, որ նավաբն ինքն է Ֆաթիլայում հավաքված և ծանր վիճակում գտնվող անգլիացի փախստականներին նյութական օգնություն ուղարկել։ Թ. Խոջամալյանն ամենայն մանրամասնությամբ պատմում է այն օգնության մասին, որը նավաբի գիտությամբ ու թույլտվությամբ կազմակերպվել է նրանց օգնելու նպատակով[44]։

Սիրաջ-ուդ-Դոուլեն, ըստ հայկական սկզբնաղբյուրների, Կալկաթան անգլիացիներից մաքրելուց հետո այն վերանվանել է Ալիհնաղար, ռաջա Մանիկ Չանդրին նշանակել ազատագրված քաղաքի և նրա շրջակա շրջանների կառավարիչ, իսկ ինքը վերադարձել Մուրշիդաբադ[45]։

Բենգալիայի պատմության՝ Կալկաթայի գրավումից հետո ընկած դեպքերի մասին բոլոր ուսումնասիրողներն առանց բացառության խոսել են մեկ-երկու նախադասությամբ միայն։ Այսպես, օրինակ, «Հնդկաստանի նոր պատմություն» մոտ 800 էջանոց ուսումնասիրության մեջ այդ դեպքերի մասին գրված է հետևյալը. «Մադրասից Կլայվի և ծովակալ Վաթսոնի հրամանատարությամբ անհապաղ օգնություն է ուղարկվել Բենգալիա։ Կլայվին հա-

---

41 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 47։

42 T. Khogamall, նշվ. աշխ., էջ 74։

43 „The Life and adventures in India of Joseph Emin an Armenian", London, 1792, p. 272.

44 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 52։

45 Նույն տեղում, էջ 53։

ջողվեց բենգալացիներին արտաքսել Կալկաթայից և նավաբի հետ պայմանագիր կնքել»[46]։ Ավելին չի ասվում նաև մյուս ուսումնասիրություններում։

Թ. Խոջամալյանը այդ դեպքերի մասին պատմում է շատ ավելի մանրամասն ու փաստացի, և նրա հաղորդումների լույսի տակ դեպքերը ստանում են այլ պատկեր։ Նախ պարզվում է, որ Բենգալիա զորքեր են ուղարկվել ոչ միայն Մադրասից, այլև Բոմբեյից։ Դեպի Բենգալիա ուղարկվող նավերը եղել են ոչ թե երեքը, այլ ութը. հինգը՝ Մադրասից, երեքը՝ Բոմբեյից։ Ընդհանուր առմամբ, ուղարկված զինվորների թիվը Թ. Խոջամալյանը հաշվում է 8.500 (8000 սիփայի և 500 անգլիացի)՝ չհաշված[47] Կալկաթայից Ֆաթլա կղզի փախած անգլիացի զինվորներին, որոնք օգնության եկածներին միացան նրանց ափ իջնելու պահին։ Ափ իջած անգլիական ուժերը, ըստ Թ. Խոջամալյանի, առաջին հարվածը հասցրել են Բաջի-Բաջի ամրոցին, որը պաշտպանում էր ոչ մեծ մի զորաջոկատ։ Այստեղ էր գտնվում նաև ռաջա Մանիկ Չանդրի հիմնականում հեծելազորից բաղկացած 2000-անոց զորքը[48]։ Թ. Խոջամալյանի բերած փաստերը խոսում են այն մասին, որ անգլիացիների առաջին գրոհներն ամրոցի պաշտպանները հաջողությամբ ետ են մղել։ Անհաջող է անցել նաև բանակցությունների ճանապարհով ամրոցին տիրանալու անգլիացիների փորձը։ Ընկնելով անելանելի վիճակի մեջ՝ անգլիական հրամանատարությունը դիմել է իր նախասիրած մեթոդին՝ կաշառել է ռաջա Մանիկ Չանդրին։ Ռաջայի դավաճանությանն անտեղյակ ամրոցի պաշտպանները չորս օր հերոսաբար պաշտպանվել են։ Միայն հինգերորդ օրը, երբ նրանց հայտնի է դարձել ռաջայի դավաճանությունը և նրանց մեջ շփոթություն է առաջացել, անգլիացիներին հաջողվել է գիշերային հարձակումով գրավել ամրոցը[49]։ Ինչպես տեսնում ենք, Թ. Խոջամալյանի հաղորդումների համաձայն Կալկաթան և նրա շրջակայքը ետ գրավելն ամենևին էլ թեթև ռազմական գործողություն չէր Կլայվի և Վաթսոնի համար, ինչպես այն ներկայացնում են անգլիական բուրժուական պատմաբանները։

Այնուհետև անգլիացիներին հաջողվեց գրավել Կալկաթան և Հուգլին, որից հետո վերջինս հրկիզելով և «յաւար տոնելով դարձան յետս ի Կալկաթա»[50]։ Հուգլիի կողոպուտի և հրդեհման պատմությունը տալուց հետո Թ. Խոջամալյանը թռուցիկ անդրադարձել է նաև Սիրաջ-ուդ-Դոուլեի և անգլիական բանակների մի նոր բախմանը[51], ավելի շուտ Բաղբազարի մոտ անգլիական զորքերի՝ դեպի նավաբի ճամբարը կատարած անհաջող արշավին։ Այդ «փոքրիկ զորաջոկատը», այդպես են գրում անգլիացիները[52], իսկ ըստ Թ. Խոջամալյանի՝ 1200 զինվորներից բաղկացած անգլիական զորամասը, բենգալացիները ջախջախեցին և ետ շպրտեցին։ Թ. Խոջամալյանի հայտնած թվական տվյալը պետք է հավաստի համարել. այլ կերպ չի կարելի բացատրել նրա բերած անգլիական կորուստների թիվը՝ 57 սպանված և 217 վիրավոր[53]։ Այս դեպքերից հետո Բենգալիայի ֆեոդալական վերնախավի ճնշման տակ Սիրաջ-ուդ-Դոուլեն դիմեց զիջման և անգլիացիների հետ 1757 թ. փետրվարի 9-ին Ալինաղարում կնքեց մի պայմանագիր, որը հայտնի է «Ալինաղարյան» անունով[54]։ Այդ պայմանագրի կետերից մեկի համա-

---

46 «Новая история Индии», М., 1961, с. 99.

47 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 54։

48 Նույն տեղում, էջ 55—56։

49 Նույն տեղում։

50 Նույն տեղում, էջ 57։

51 Նույն տեղում։

52 „Bengal Navabs", Translated into English Jadu Nat Sarcar (Calcutta), 1952, p. 172.

53 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 57։

54 R. K. Gupta, նշվ. աշխ., էջ 24։

ձայն նավաբը պարտավոր էր «փոխհատուցել Կալկաթայում անգլիացիների կրած վնասը»։ Սակայն նավաբը չէր ուզում դա կատարել։ Հայտնի է ծովակալ Վաթսոնի անտակտ և վիրավորանքներով լի նամակը նավաբին, որով նա վերջինիս սպառնում էր ռազմատուգանքը շտապ չմուծելու դեպքում այնպես հրդեհել նրա երկիրը, որ «անգամ Գանգեսի ողջ ջրերը ի վիճակի չլինեն հանգցնելու այն»[55]։ Ինչպես երևում է «Պատմութիւն Հնդկացից», այդ նամակը նույնպես չի ազդել նավաբի վրա։ «Կալկաթայի խորհուրդը», ըստ «Պատմութիւն Հնդկացի», ստիպված պատվիրակություն է ուղարկել նավաբի մոտ[56]։ Վերջինս ամեն կերպ աշխատել է ձգձգել ռազմատուգանք վճարելը[57], քանի որ, ըստ Թ. Խոջամալյանի, այդ օրերին միասնական ճակատ ստեղծելու նպատակով Սիրաջ-ուդ-Դոուլեն ֆրանսիական ֆակտորիա էր ուղարկել նամակ՝ հետևյալ բովանդակությամբ. «Դուք եկայք առ իս, և ես ձեզ բաղում գանձս և երկիրս ընծայեմ, զի միաբանացուք և պատերազմեսուցք ընդ ինկլիզաց և վարսեցուք զնոսա յաշխարհէ իմմե, զի ոչ թողից զնոսա վերստին զայ յաշխարհս իմ»[58]։ Սակայն ֆրանսիացիներն այդ նամակը անպատասխան թողեցին։ «Ի նշան շնորհակալության» անգլիացիները հարձակվեցին Բենգալիայում ֆրանսիացիների վերջին հենակետ Շարնոերնագորի վրա, կողոպտեցին և հիմնահատակ կործանեցին այն[59]։ Նավաբը և անգլիացիները եռանդուն պատրաստվում էին նոր բախման։ Այստեղ ևս անգլիական խորամանկ դիվանագիտությունը դիմեց իրեն այնքան հատուկ անազնիվ քայլի և կարողացավ կաշառել նավաբի բանակի գլխավոր հրամանատար Միր Ջաֆար Ալի-խանին[60]։ Միր Ջաֆարը, որը մի քանի անգամ անհաջող փորձեր էր արել տիրանալու Բենգալիայի գահին, սիրով դաշնակցեց իր երկրի թշնամիների հետ։ Նրա և անգլիացիների միջև կնքվեց գաղտնի պայմանագիր, որի համաձայն Միր Ջաֆարը Բենգալիայի նավաբ դառնալու դեպքում պարտավորվում էր անգլիացիներին վճարել 4 քրոր ռուպի՝ որպես փոխհատուցում Կալկաթայում անգլիացիների կրած կորուստների[61]։ Պայմանագրի այս, ինչպես նաև մյուս յոթ կետերի կատարումը նշանակում էին Բենգալիայի կապիտուլյացիա և անգլիացիներին դարձնում էին նրա փաստական տերերը։

Մեկ այլ հայ հեղինակ, խոսելով Պլեսսի ճակատամարտից առաջ տեղի ունեցած իրադարձությունների մասին, գրել է, որ անգլիացիները կաշառել էին ոչ միայն Միր Ջաֆարին, այլև մի շարք ուրիշ բարձրաստիճան սպաների[62]։ Կ. Մարքսն իր «Ժամանակագրական գրառումներում» գրում է. «Միր Ջաֆարը, մոնղոլական բանակի հրամանատարը, նամակ գրեց Կլայվին։ Նա առաջարկում էր ամեն գնով սկսել գլխավոր ճակատամարտը, խոստանալով անցնել անգլիացիների կողմը, եթե իրեն Սիրաջ-ուդ-Դոուլեի փոխարեն դարձնեն Բենգալիայի, Բիհարի և Օրիսսայի կառավարիչ։ Կլայվն ընդունեց այդ առաջարկը»[63]։

Չգալով մոտալուտ վտանգը՝ Սիրաջ-ուդ-Դոուլեն, Թ. Խոջամալյանի վկայության համաձայն, դիմում է վճռական գործողություններին։ Նավաբի հրամանով բոլոր անգլիացիները համարվում են երկրի թշնամի։ Այդ հրամանով երկրում գործող հարյուրավոր անգլիացի վաճառականներ ձերբակալ-

---

55 Е. Я. Люстерник, նշվ. աշխ., էջ 181։

56 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 58։

57 Նույն տեղում։

58 Նույն տեղում, էջ 59։

59 К. Антонова, նշվ. աշխ., 84։

60 A. Ch. Roy, The Carer of Mir Jafar Khan, London, 1908, p. 170.

61 Ch. U. Aitcison, A collection of traties, endlagements and Sanats to, India and neighbering countries, vol. I, Calcutta. 1909, p. 26.

62 Հ. Գ. Ագոնց, նշվ. աշխ., հ. Գ, Վենետիկ, 1806, էջ 64։

63 К. Маркс, Хронологические выписки по истории Индии..., с. 63.

վեցին, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվեց որպես թշնամու ունեցվածք և այլն[64]։

Սիրաջ-ուդ-Դոուլեի և անգլիական բանակները հանդիպեցին Պլեսսի գյուղի մոտ, 1757 թ. հունիսի 29-ին։

Բուրժուական, հատկապես անգլիական պատմագիտության մեջ ճակատամարտի ընթացքի մասին խոսող բոլոր ուսումնասիրողներն առանց բացառության գրում են, որ հնդիկները, որոնց թիվը 68 հազար էր (50 հազար հետևակ և 18 հազար հեծյալ), անգլիական մի քանի հազարանոց զորքերի առաջին իսկ գրոհի ժամանակ առանց դիմադրության խուճապահար փախել են։ Դժբախտաբար, փաստական նյութի պակասը ստիպել է նույնը կրկնել նաև առանձին հնդիկ[65], երբեմն նաև սովետական դիտնականների[66]։ Ըստ Թ. Խոջամալյանի «Պատմութիւն Հնդկացի» ճակատամարտն ունեցել է հետևյալ ընթացքը։ Սիրաջ-ուդ-Դոուլեն ճակատամարտից առաջ բանակը բաժանել է երեք մասի՝ իր, Միր Ջաֆարի և բենգալական բանակի խիզախ հրամանատարներից մեկի՝ Միր Մադանի, հրամանատարությամբ։ Սիրաջ-ուդ-Դոուլեի ղեկավարած զորքը, հավանաբար, կանգնած է եղել թիկունքում։ Իրավացակն այնպիսին է եղել, որ դավաճան Միր Ջաֆարը ճակատամարտի սկզբում չի համարձակվել չմտնել մարտի մեջ։ Անգլիական զորքերի դեմ հատկապես հերոսաբար են կռվել Միր Մադանի զինվորները։ Կլայվը վախենալով, որ Միր Ջաֆարը դրժել է ուխտը՝ ընկել է երկմտանքի մեջ։ Սակայն, ճակատամարտի ընթացքում, ինչպես վկայում է Թ. Խոջամալյանը, դավաճանը լրաբերով հայտնել է Կլայվին, թե «Մի երկնչեր յինէն, թէպէտ և ես պատերազմիմ, բայց միայն հրամոշոյ ձայնք են, զոր լսերդ և ոչ կայ ի բոլիկ ի մէջ հրացանաց, կամ քենեկացն, և ոչ վնասեն ինչ ձերոց զորաց»[67]։ Միր Ջաֆարը միաժամանակ խորհուրդ է տվել. «Դուք որքան որ կարողանայք զօրոք ձերովք պատերազմեսցիք ընդ դիր զորաց Միր Մադանին, որ նա ի սրտէ և քաջութեամբ կռուէ ընդ ձեզ, լոր ժամ գնա սպանէք կամ փախուստ դարձուցանէք, յայնժամ մեք ամենեքեան ընդ ձեզ եմք»[68]։ Համոզվելով, որ Միր Ջաֆարի զորքը, իրոք չի պատերազմի իրենց դեմ, անգլիացիները կռվող զորքը դարձրել են Միր Մադանի զորախմբի վրա։ Սակայն նրանք այստեղ էլ միանգամից հաջողության չեն հասել։ Միր Մադանի զորքերը սկզբում հաջողությամբ դիմադրել են թշնամուն։ Անգլիացիներին քաջ հայտնի էր Միր Մադանի նվիրվածությունը նավաբին և նրա խիզախությունը, ուստի ամեն գնով աշխատում են վերացնել նրան։ Այստեղ էլ նրանց օգնում է Միր Ջաֆարը. նա լրտեսի միջոցով անգլիացիներին ցույց է տալիս այն փիղը, որի վրայից զինվորի շորեր հագած Միր Մադանը ղեկավարում էր ճակատամարտը։ Դրա շնորհիվ անգլիացիներին հաջողվում է սպանել Միր Մադանին[69], որի կորուստը ճակատագրական էր Սիրաջ-ուդ-Դոուլեի համար։ Միր Մադանը, փաստորեն, միակ մարդն էր Սիրաջ-ուդ-Դոուլեի բանակի բարձր հրամանատարության մեջ, որին նա լիովին վստահում էր[70]։ Սիրաջ-ուդ-Դոուլեն չի փախել ռազմաճակատից, ինչպես այդ պնդում են ուսումնասիրողները։ Դավին անտեղյակ նավաբը ճակատամարտի հրամանատարությունը հանձնելով դավաճան Միր Ջաֆարին (նրա ղեկավարության տակ դնելով նաև իր հրամանատարության տակ գտնվող զորքերը), վերադարձել է Մուրշիդաբադ՝ նոր զորահավաք կատարելու համար։ Մինչ նավաբը զբաղված էր դրանով, նրա գլխավոր հրամանատարը «միաբանեցաւ ընդ ինկլիզաց զօրօք իւրովք

64 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 60։

65 Н. К. Синха, А. Ч. Банерджи, նշվ. աշխ., էջ 306։

66 «Новая история стран зарубежного Востока», т. I., ч. I, М., 1956, с. 170.

67 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 61։

68 Նույն տեղում։

69 Նույն տեղում, էջ 66։

70 К. Маркс. Хронологические выписки по истории Индии..., с. 63.

և ետուն պատերազմ ընդ մնացեալ զօրացն Միր Մադանի»[71]։ Ինչպես տեսնում ենք, փաստորեն, ճակատամարտի ընթացքը վճռել է Միր Ջաֆարի դավաճանությունը։

Բնականաբար, մնալով առանց հրամանատարի և իր դիմաց ունենալով անգլիական ու բենգալական դավաճան բանակը, ինչպես նաև չստանալով օգնություն, Սիրաջ-ուդ-Դոուլեի բանակի նրան հավատարիմ մնացած մասն անկարող եղավ դիմադրել և նահանջեց։ Պարտության լուրը լսելով ցրվեցին նաև նոր հավաքագրված զորքերը։ Սիրաջ-ուդ-Դոուլեն ապաստան գտավ Ռաջմահալում։ Թ. Խոջամալյանը այնուհետև մանրամասն պատմում է դավաճանության և մատնության ճանապարհով նավարի ձերբակալման մասին։ Համաձայն Թ. Խոջամալյանի, Սիրաջ-ուդ-Դոուլեին ձերբակալող ջոկատի հրամանատար Միր-Ջաֆարի որդի Միրենը անգլիացիների գիտությամբ սպաննեց նավաբին, գլխատեց դիակը և գլուխը ցից հանած բերեց Մուրշիդաբադ[72]։

Հաղթելով Պլեսսիի տակ, անգլիացիները ստացան հարուստ մարդեր, որոնց ռեսուրսները նրանք հետագայում օգտագործեցին Հնդկաստանին տիրելու համար մղվող պայքարում։ Պատահական չէ, որ հենց Պլեսսիի ճակատամարտի թվականից են անգլիական գաղութային իշխանությունները հաշվում իրենց տիրապետության սկիզբը Հնդկաստանում։

Այսպիսով, օգտագործելով Թ. Խոջամալյանի «Պատմութիւն Հնդկաց» աշխատությունը, որը գրված է դեպքերին ականատեսի կողմից՝ հնդկական արխիվներից առած հավաստի փաստերով, հնարավոր է դառնում վերականգնելու բուրժուական, հատկապես անգլիական պատմագիտության կողմից գրեթե անճանաչելիության աստիճան աղավաղված հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջին փուլի պատմության հետաքրքիր էջերից մեկը։ «Պատմութիւն Հնդկացից» երևում է, որ Սիրաջ-ուդ-Դոուլեի հակաանգլիական ելույթն ինքնապաշտպանության ակտ էր և ոչ թե ուներ անգլիական վաճառականներին կողոպտելու միտում, ինչպես պնդում են անգլիացիները։ Բենգալիայի ժողովուրդը իր երիտասարդ նավարի ղեկավարությամբ դուրս եկավ զինված պայքարի՝ հանուն իր հայրենիքի անկախության։

АНТИКОЛОНИАЛЬНАЯ БОРЬБА В БЕНГАЛИИ ПОД РУКОВОДСТВОМ СИРАДЖА-УД-ДОУЛЕ (1756—1757 гг.) ПО АРМЯНСКОМУ ИСТОЧНИКУ

РАФИК АБРАМЯН

Резюме

При изучении истории национально-освободительного движения индийского народа против английских захватчиков достоверным источником может служить «История Индии» Товмаса Ходжамаляна, в основе которой лежат записи очевидца и архивные документы королевского архива Шах-Алема II-го. В 1756 г., придя к власти, молодой наваб Сирадж-уд-Доуле стал вести активную антианглийскую политику. В 1756—1757 гг. в ряде сражений он разгромил англичан и выдворил их из своей страны. В операциях бенгальской армии участвовал также добровольческий отряд индийских армян. Генеральное сражение происходило под Плесси. Буржуазные историки пишут, что англичане победили почти без боя, при первой же атаке. Однако, как показывает армянский источник, бенгальские войска героически сопротивлялись почти месяц и лишь благодаря измене главнокомандующего армии наваба англичанам удалось победить.

71 Թ. Խոջամալյան, նշվ. աշխ., էջ 68։

72 Նույն տեղում, էջ 69։